



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11
էլ. հասցե: info_gavar@aarhus.am

N AA - 016

« 17 » Սեպտեմբերի 2014թ

«Արփա-Սևան» ԲԲԸ-ի
գլխավոր տնօրեն՝ Պարույր Հակոբյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հակոբյան

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը՝ խնդրում եմ Ձեզ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

- ✓ Ի՞նչ սկզբունքով, ո՞ր օրենքի, ո՞ր կետով կամ ի՞նչ որոշման հիման վրա է թույլատրվել Արփա-Սևան թունելից Եղեգիս գետ բաց թողնել ջրաքանակ (հիմքերը՝ <https://www.youtube.com/watch?v=0Bt2UK4mxGs> հղումով),
- ✓ որքա՞ն ժամանակ և ի՞նչ նպատակով է, որ Արփա-Սևան թունելից Եղեգիս գետ ջուր է բաց թողնվում
- ✓ խնդրում եմ տրամադրել 2010-2014 թվականին Եղեգիս գետ բաց թողնված ջրի ծավալի մասին տվյալներ ըստ ամիսների:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/): Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն
Հարգանքով՝

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող

Լ. Ստյան